Տ. ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(11 սեպտեմբերի, կիրակի, 1998 թ.)

«... եւ աշխարհս անցանէ՝ եւ ցանկութիւնն, իսկ որ առնէ զկամս Աստուծոյ՝ մնա ի յաւիտեան»:

(Ա Հովհաննես Բ 17)

« ...թե՛ այս աշխարհը կանցնի և թե՛ ցանկությունը, սակայն Աստուծո կամքը կատարողը հավիտյան կմնա»:

Աստծո կողմից արարված և ստեղծված ամեն ինչի ժամանակավոր լինելու փաստը անժխտելի է եղել բոլոր ժամանակների համար: Ժամանակավոր բնույթ ունի թե՛ նյութականը և թե՛ աննյութականը, թե՛ կենդանականը և թե՛ նաև բանական մարդը:

Այս պատմական հենք ունեցող տեսակետի հետ համաձայնվում է նաև Ավետարանիչը, սակայն այն տարբերությամբ, որ մարդ արարածը կարող է իրենից թոթափել անցողականությունը և հավիտենական կյանք ունենալ: Այսպիսով՝ Հովհաննու կողմից արտաբերված հավիտենական կյանքի գոյության գաղափարը սուր հակադրություն է առաջ բերում պատմականորեն փաստված «ամեն ինչ դատապարտված է ոչնչացման» փաստարկի հետ:

Ինչպե՞ս կարող է գոյություն ունենալ հավիտենական կյանք, երբ անցյալի և մեր ամենօրյա փորձառությամբ տեսնում ենք, որ բոլոր արարվածների ժամանակավոր լինելու հետ մեկտեղ մահվան կնիքն իր վրա է կրում նաև մարդ արարածը, և մի՞թե այդ մահվան և ոչնչացման դեմ չեն բողոքել ժամանակի իմաստուններն ու փիլիսոփաները, թե ինչո՞ւ համար պետք է ոչնչանա թե՛ չարը և թե՛ բարին, թե՛ իմաստունը և թե՛ հիմարը, թե՛ պաշտոնյան և թե՛ ստրուկը, և մի՞թե այսօր նույնպես բողոքողներ չկան այդ անհավասար մահվան դիմաց: Սակայն թեկուզև հարյուրապատկվեն և հազարապատկվեն այդ ընդվզումներն ու բողոքարկումները, միևնույն է, աշխարհը և ամենայն ինչ անցողական են, մահվան և կործանման անողոք ժանիքները ի զորու են մխրճվելու յուրաքանչյուր բաբախող սիրտ և անշնչացնելու այն: Հիրավի, մահը անխուսափելի է, և մարդկային ոչ մի ուժ չի կարող պատնեշել մահվան այս ալիքը, որը հավասարապես ոչնչացնում է այն ամենը, ինչ որ արարված է և ապրում է այս արևի ներքո:

Հետևաբար, մարդու համար հավերժական լինելու գաղափարը երևակայության արդյունք կարող է դիտվել: Բայց առաքյալը հնարավոր է համարում մարդու հավիտենական կյանք ունենալը: Նա, հակառակ

պատմականորեն փաստված տեսակետի, վեր է բարձրացնում աչքերը և համոզված բարբառում՝ թե՛ այս աշխարհը կանցնի և թե՛ ցանկությունը, սակայն Աստուծո կամքը կատարողը հավիտենապես կմնա:

Այո, նա նույպես համաձայն է, որ անցողական բաներ կան, սակայն նա հաստատում է նաև, որ բաներ էլ կան, որոնք հավիտենական են և ժամանակային սահմանագիծ չեն ճանաչում: Բայց նա այդ անցողականների ու մնայունների զատորոշումը ոչ թե նրանց հարաբերական կարևորությամբ է որոշում, այլ իրենց ներքին բարոյական արժեքներով, այսինքն՝ հավիտենական լինելու որակում է տալիս նրանց, ովքեր քայլում են Աստծո կամքին համընթաց:

Մահվան խարանը, տարիների և անցյալի թանձր մշուշը անկարող են ոչնչացնել այն անձանց, ովքեր հանրության խնդիրների բարձրացնողն ու դրական ավարտի հասցնողներն են հանդիսացել, ովքեր իրենց ուժային և մտավոր ձիրքերով եզակիություններ են համարվել ընդհանրության մեջ, և սերունդները նրանց հավերժացրել են: Այսօր թեպետև նրանք չկան ֆիզիկապես, սակայն վստահ եղեք, նրանք հավիտենապես ապրում են սերունդների հիշողություններում: Ժամանակը վախենում է եգիպտական բուրգերից, սակայն առավել ևս գլուխ է խոնարհում նման անձաց առջև:

Եվ արդ, եթե մարդկային ցեղը, որ Աստծո ստեղծագործության արդյունք է և հնարավորություններով սահմանափակ, կարող է հավերժացնել նման անձանց, ապա որքա՞ն ևս Աստված կարող է հավերժացնել այն անձանց, ովքեր ապրել են սուրբ և անբիծ կյանքով, ովքեր կամավորներն են եղել Իր կամքի: Նման մարդիկ ապրում են հավիտենապես՝ անկախ աշխարհի և աշխարհային ցանկությունների լինելիությունից: Աստված Իր կողմից հիշվածներին երբեք չի մոռանա, և չնայած այդ մարդիկ ֆիզիկապես ճանաչում են մահը, բայց երբեք չեն մահանում, այլ ուղղակի մահը նրանց համար մի օղակ է հանդիսանում՝ երկրային կյանքից տեղափոխվելու դեպի Աստծո կողմից պատրաստված երկնային հավերժական կյանքեր:

Հետևաբար, սիրելի հավատացյալ ժողովուրդ, մեզանից յուրաքանչյուրին հավիտենական կյանք ունենալու հնարավորություն է ընձեռնված: Սակայն, ո՞րն է այդ հնարավորությունը, ձեզանից յուրաքանչյուրը արդարացիորեն կարող է հարցում անել այս պահին, և նաև՝ թե ո՞րն է իրական կյանքը, որը հավիտենապես ապրելու նախապայմանն է: Սիրելիներ, այդ կյանքը ոչ թե ամբողջությունն է մեր ապրած տարիների, այլ այդ թերևս բաղկացած լինի մի քանի օրերից կամ ամիսներից, որոնք հավիտենական արժեք են ներկայացնում, ճակատագրական այն վայրկյաններն են, երբ մենք ջանացել ենք ինքներս մեզ գերազանցել, երբ մեր հոգու վրայից վեր ենք բարձրացրել այն ծանր քարը, որի տակ բնակություն են հաստատել մեր աշխարհիկ սովորություններն ու նախապաշարումները, և Աստծո մեծ գուրգուրանքով Նրա կամավորներն ենք դարձել: Պահենք այդ պահերի գուրգուրանքը մեր սրտերում, քանզի մեր բուն կյանքը այդ պահերն են: Ուստի այսօրվանից նեթ, սիրելի ներկաներ, կարգախոս դարձնենք մեզ համար Հովհաննեսի Ա թղթի երկրորդ գլխի 17-րդ համարը, որ աշխարհը և նրա ցանկությունը անցողական են, բայց հավիտենապես կապրի Աստծո կամքը կատարողը:

Հետևաբար թող մեզ չվախեցնի այն փաստը, որ ուշ թե շուտ մենք էլ ենք կնքելու մեր մահկանացուն, այլ թող սթափեցնի և պարտավորեցնի, որ ավելի ու ավելի փորձենք իմանալ Աստծո կամքը և ապրենք համաձայն նրա, քանզի ով կատարում է Աստծո կամքը, հավիտյանս պիտի ապրի, որովհետև իր կյանքը

ձևակերտել է Աստծո կամքի վրա՝ որը հավիտյան է և անվախճան: Եվ երբ վերին կոչը իրեն երկինք հրավիրի, աներկյուղ ուղևորվի դեպի հավիտենականություն:

Աստված թող օրինի ամենքիդ և երկար տարիների կյանք պարգևի, սակայն երբևէ չունայնացնեք ձեզ շնորհված և ոչ մի օրը, սիրեք Աստծուն ձեր բոլոր օրերում և լցրեք այն ձեր աստվածահաճո գործերով և վստահ եղեք, որ Տվիչն ամենայնի երբեք չի մոռանա իր կամքը կատարողներին:

Կամոքն Աստծո քառասուն օրեր առաջ, օգոստոսի 30-ին, Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի տնօրինությամբ և Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի ձեռամբ, մեր Սրբություն Սրբոց Տաճարի խորանի վրա ծնրադրած քահանայական օծում և ձեռնադրություն ստացան Սևանի դպրանոցն ավարտած և վերջին՝ վեցերորդ լսարանը էջմիածի Հոգևոր ճեմարանում ուսանած ութ սարկավագներ և նրանցից մեկը՝ կուսակրոն: Ձեռնադրվածների թվում էի և ես՝ Տ. Հակոբ քհն. Խաչատրյանս:

Այսպիսի պատասխանատու պաշտոնի արժանանալու համար մեր երախտագիտության խոսքերն ենք հղում Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետին: Նրա սիրով և ջերմությամբ լեցուն հայրական ժպիտը վայելեցինք առաջին իսկ օրը, երբ Սևանի Վազգենյան դպրանոցից տեղափոխվեցինք էջմիածնի Հոգևոր ճեմարան՝ ևս մեկ տարի ուսումառության համար: Մեկ, երկու տարիների ընթացքում թե՛ Նորին Սրբության դասավանդած առարկայից ու գլխավորած ժողովներից և թե՛ արտաբերած քարոզներից հասկացանք, թե ինչպես պետք է սիրել եկեղեցին:

Երախտագիտության խոսքեր ունենք ասելու նաև երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի շիրիմի առջև, որի օրհնությամբ վերաբացվեց այսօր նրա անունը կրող Սևանի դպրանոցը: Նրա երազանքներից մեկն այն էր, որ տեսնի դպրանոցի գեթ առաջին շրջանավարտներին: Այսօր մենք, սիրելի Վեհափառ, մեր գլուխները վեր ենք բարձրացնում դեպի վեր, խոնարհեցնում մեր ծնկները և ասում, մենք հպարտ ենք, որ այսօր դպրանոցը կրում է Ձեր անունը, և Սևանի դպրանոցից դուրս եկած ամեն մի սան Ձեր կենդանի աղոթքն է այս աշխարհում:

Մեր ամենաջերմ և սրտաբուխ շնորհակալությանց զգացումներն ենք զեղում Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Սևանի Վազգենյան դպրանոցի վերատեսուչ և նորաօծներիս Հոգևոր ծնող Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի ոտքերի առջև: Նրա անկոտրուն կամքի և հարատև ջանքերի շնորհիվ վերաբացվեց և կայացավ Սևանի դպրանոցը, որի առաջին շրջանավարտներն ենք ձեռնադրյալներս: Նրա անմիջական շնչի, հայրական խրատների և գավազանի ներքո աճեցինք և զարգացանք ուսումնառության հինգ տարիների ընթացքում: Տեսանք Սրբազան Հոր սերն ու գուրգուրանքը, զայրույթն ու պատիժները, ներողամտությունն ու հաստատակամությունը և անասելի նվիրվածությունը դեպի Հայոց եկեղեցին, դեպի Սևանի դպրանոցը: Եվ այդ ամենից ուղղակի և թե անուղղակի ազդվեցինք և որոշ գծերով նմանվեցինք նրան: Եվ ահա այսօր հավաստիացնում ենք Գարեգին Սրբազանին, որ այդ ամենը ջուր ընդ խողովակի չեն անցել, այլ ծառայել են իրենց նպատակին, և վաղը Գարեգին Սրբազանը հնձելու է այն սերմերի արդյունքը, որոնք ինքն է սերմանել մեր հոգիներում:

Շնորհակալության խոսքեր ունենք հղելու նաև Սևանի դպրանոցի նախկին տեսուչ տիար Սասուն Վարդանյանին, նրան հաջորդած ներկայիս Կոտայքի

թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանին և ներկայիս տեսուչ Տ. Մինաս քհն. Մարտիրոսյանին: Նրանք իրենց մնայուն լուման ունեն մեր ձևավորման գործում:

Չեմ կարող անտարբեր գտնվել և ջերմ ու սիրալիր խոսքեր չհղել դասախոսական կազմին, ովքեր ծարավեցին, սակայն արբեցրին մեզ, ովքեր քաղցեցին՝ մեզ հագեցնելու համար:

Երախտապարտ ենք նաև Էջմիածնի Հոգևոր ճեմարանի տեսուչ հոգեշնորհ Տ. Հայկազուն Ծ. վրդ. Նաջարյանին, վերակացուներին և դասախոսական կազմին, նաև միաբան եղբայրներին: Այն ամենը, ինչ որ թերի ու անավարտ էր մնացել Սևանի Վազգանյան դպրանոցում ուսումնառության շրջանին, նրանց պատրաստակամությամբ և սիրով փորձեցինք լրացնել:

Մեծապես երախտապարտ ենք նաև Սևանի Վազգանյան դպրանոցի բարերարներին, որոնք իրենց նյութական կարողություններից մի մեծ բաժին հատկացրել են դպրանոցի հոգսերը հոգալու համար: Մասնավորաբար շնորհակալություններս եմ հղում իմ խաչի քավորին՝ տիար Նուպար Չեսուրյանին և նրա տիկնոջը: Նրանց զոհողությունները պարտավորեցնում են ինձ:

Շնորհակալություններս նաև Ձեզ, շատ սիրելի ներկաներ: Աղոթեցեք նաև ինձ համար, որպեսզի հաստատուն և անկոտրուն մնամ կարգիս մեջ, որպեսզի կարողանամ լավ ճանաչել Աստծո կամքը և կամավորագրվեմ Նրան:

Աստված օրհնի ամենքս. ամեն: